Հավելված 1
Սևան համայնքի ավագանու՝
15.02.2023թ. N 1-Ա որոշման

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԵՎ 5-ԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ՝ 2022 ԹՎԱԿԱՆԻՆ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

**Եկամուտներ**

Միավորված համայնքի 2022թ-ի տարեկան բյուջեի եկամուտների /վարչական և ֆոնդային բյուջեները միասին/ պլանը կատարվել է 90.6%-ով: 2.326.9մլն. դրամ պլանային եկամուտների դիմաց հավաքագրած և պետական բյուջեից հատկացված դոտացիան կազմել է 2.107.7 մլն. դրամ, թերակատարումը կազմել է 219.2.0 մլն. դրամ, այդ թվում՝ վարչական բյուջեի գծով առկա է 7.0 մլն. դրամ եկամուտների գերակատարում, ֆոնդային բյուջեի գծով թերակատարումը կազմել է 239.5 մլն. դրամ է:

2022թ-ի համայնքի բյուջեի վարչական մասը կատարվել 100.5 %-ով / պլան՝ 1.456.3 մլն. դրամ, փաստացի՝ 1.463.3 մլն. դրամ/: Վարչական բյուջեում սեփական եկամուտները կատարվել են 101.4%-ով / պլան՝ 475.6 մլն. դրամ, փաստացի՝ 482.4 մլն. դրամ/: Գերակատարումը կազմել է 6.8 մլն դրամ կամ 1.4 %: Հարկերի և տուրքերի պլան կատարվել է 105.9 %-ով: Հարկերի և տուրքերի մեջ գերակատարվել է միայն գույքահարկ շենք-շինությունների գծով՝ 0.1 մլն. դրամի չափով և փոխադրամիջոցների գույքահարկը՝ 123.1%-ով կամ 47.3 մլն. դրամի չափով, իսկ անշարժ գույքի հարկի, տեղական և պետական տուրքերի գծով առկա են պլանների թերակատարումներ ընդհանուր 26.3 մլն. դրամի չափով: Ոչ հարկային եկամուտների մեջ գերակատարվել է ինքնակամ կառույցների օրինականացման, տեղական վճարների և այլ եկամուտների գծով եկամտատեսակները իսկ ուսունական, ծնողական վճարները և մնացած ոչ հարկային եկամուտների մասով առկա է թերակատարում:

Հարկ է նշել, որ 2021 թ. հունվարի 1-իվ գործողության մեջ է դրվել անշարժ գույքի հարկը, որը միավորել է նախկին գույքահարկը և հողի հարկը, ինչպես նաև առանձնացվել է փոխադրամիջոցների գույքահարկը հարկը ֆիզիկական և իրավաբանական անձանց գծով: Չնայած առկա բազմաթիվ անճշտություններին՝ ներդրված նոր ծրագրերն աշխատում են անխափան, զուգահեռ աշխատում է նաև գույքահարկերի նախկին ծրագրերը:

Համայնքի ֆոնդային բյուջեի եկամուտները կատարվել է 80.3 %-ով / ճշտված պլան՝ 1.217.3 մլն. դրամ, փաստացի՝ 977.8մլն. դրամ /:

Համայնքի ֆոնդային բյուջեի եկամուտների թերակատարման պատճառը օբյեկտիվ է՝ կապված համայնքում հողերի և հիմնական միջոցների օտարման բացակայության հետ:

2022թ. տարվա ընթացքում ստացվել և ծախսվել է 2021թ. համար նախատեսված 81.2 մլն. դրամի սուբվենցիա:

Համայնքի 2022թ. տարեկան բյուջեի եկամուտների կատարման վերաբերյալ ավելի մանրամասն ցուցանիշները բերված են հավելված 1-ում:

Համայնքի բնակավայրերի կողմից սեփական եկամուտների 2022թ-ի տարեկան բյուջեի կատարման վերաբերյալ ավելի մանրամասն ցուցանիշները բերված են հավելված 3-ում:

**Ծախսեր**

Հիմք ընդունելով եկամուտների կատարման ցուցանիշները՝ համապատասխանաբար կատարվել են համայնքի 2022թ. տարեկան բյուջեի ծախսերը: Համայնքի բյուջեի ծախսերը կատարվել է 90.1%-ով: 2 427.5մլն. դրամ պլանային ծախսերի դիմաց փաստացի կատարվել է 2.187.6 մլն. դրամի ծախս, կամ թերակատարումը կազմել է 239.9 մլն. դրամ, կամ 9.9% :

Վարչական բյուջեի ծախսերը կատարվել են 98.7 %-ով (պլան՝ 1.457.9մլն. դրամ, փաստացի 1.439.0 մլն. դրամ), թերակատարումը կազմել է 18.9 մլն. դրամ: Վարչական բյուջեի փաստացի ծախսերի 34.2%-ը կամ 492.7 մլն. դրամ կազմել են կրթության և մշակույթի ծախսերը, 368.5 մլն.դրամ՝ ընդհանուր բնույթի համայնքային ծառայությունները՝ 211.5մլն. դրամ՝ սանիտարական մաքրման ծախսեր:

Ըստ առանձին ոլորտների՝ համայնքի 2022թ.տարեկան բյուջեի ծախսերը կատարվել են հետևյալ չափերով՝ կրթության ծախսերը՝ 99.7% , մշակույթի ծախսերը՝ 99.3 %, սանիտարական մաքրման ծախսեր 99.9 %:

2022թ. համայնքի բյուջեի ֆոնդային մասի ծախսերը կատարվել են 82.2%-ով (պլան՝ 1 316.4մլն. դրամ, փաստացի ծախս՝ 1.082.1մլն. դրամ): Համայնքի 2022թ. ֆոնդային բյուջեից վճարվել է 915.8 մլն. դրամ ասֆալտապատման, փոսային հիմնանորոգման համար, այդ թվում նաև պարտքեր նախորդ տարիներից տեղափոխված: Կառուցվել է 97.8 մլն. դրամի արտաքին լուսավորության ցանց:

Համայնքի 2022թ-ի տարեկան ծախսերի կատարման ավելի մանրամասն ցուցանիշները բերված են հավելված 2-ում:

Համայնքի 2022թ-ի ֆոնդային բյուջեով իրականացվել են բազմաթիվ ծրագրեր: Համայնքի բյուջեի միջոցներից ծրագրերի իրականացման նպատակով վճարվել է 596.1 մլն. դրամ: Պետական բյուջեից ստացվել և վճարվել է 486.0 մլն. դրամ:

Համայնքի 2022թ-ի ֆոնդային բյուջեի տարեկան ծախսերի կատարման ավելի մանրամասն ցուցանիշները բերված են հավելված 4-ում:

**Պարտքեր**

2022թ. հունվարի 1-ի դրությամբ պարտքերը կազմել են 34.7մլն. դրամ:

2022թ-ի տարվա ընթացքում մարվել է 34.2 մլն. դրամ պարտք, այդ թվում՝ 25.1մլն. դրամ ճանապարհների հիմնանորոգման աշխատանքների մասով 2016թ.-ից տեղափոխված պարտքեր:

Սևան համայնքի միավորման արդյունքում գյուղական բնակավայրերից համայնք է տեղափոխվել ընդհանուր 95.1 մլն. դրամ կապիտալ ծրագրերի և այլ գործառույթների գծով պարտքեր: Մարվել է 82.0 մլն. դրամը, որից 63.2 մլն. դրամը ստացված սուբվենցիայի հաշվին, 18.8 մլն. դրամը համայնքի հաշվին :

Վարչական բյուջեի գծով ընթացիկ բնույթի տեղափոխված բոլոր պարտքեր այդ թվում աշխատավարձի գծով, ամբողջությամբ մարվել՝ զրոյացվել են:

2022թ-ի ընթացքում ավարտված, սակայն չֆինանսավորված մի շարք ծրագրերի ֆինանսավորումը տեղափոխվել է 2023թ-ն, որի արդյունքում առաջացել է ընհանուր շուրջ 511.0 մլն. դրամի պարտք:

2023թ-ի հոնվարի 1-ի դրությամբ համայնքի ֆոնդային բյուջեի ընդհանուր պարտքը կազմում է 527.0 մլն. դրամ:

ՀԱՎԵԼՎԱԾ N 2
Սևան համայնքի ավագանու
15.02.2023թ. 1-Ա որոշման

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2022Թ. ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԸ

ՀԱԶԱՐ ԴՐԱՄՆԵՐՈՎ

| Հ/Հ | ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ | 2022 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ | | |
|---|---|---|---|---|
| | | ՊԼԱՆ | ՓԱՍՏԱՑԻ | ՊԼԱՆԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏՈԿՈՍ |
| | **ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ, ՈՐԻՑ** | 354481.7 | 375569.7 | 105.9 |
| 1 | Գույքահարկ համայնքի տարածքում գտնվող շենք-շինություններից | 10000.0 | 10100.0 | 101.0 |
| 2 | Հողի հարկ | 49845.0 | 34118.3 | 68.4 |
| 3 | Անշարժ գույքի հարկ | 63936.7 | 55251.0 | 86.4 |
| 4 | Գույքահարկ փոխադրամիջոցներից | 205000.0 | 252281.9 | 123.1 |
| 5 | Տեղական տուրքեր | 12000.0 | 10608.5 | 88.4 |
| 6 | Պետական տուրքեր | 13700.0 | 13210.0 | 96.4 |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ ՈՉ ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ, ՈՐԻՑ** | 121111.1 | 106802.3 | 88.2 |
| 7 | Ընդամենը հողի և գույքի վարձակալության վարձավճարներ | 39383.7 | 25109.2 | 63.8 |
| 8 | Աղբահանության վճար | 42320.0 | 32923.8 | 77.8 |
| 9 | Ինքնակամ կառույցների օրինականացման վճար | 28040.0 | 31220.7 | 111.3 |
| 10 | Մսումանկապարտեզների ծառայության վճարներ | 1000.0 | 780.0 | 78.0 |
| 11 | Արտադպրոցական դաստիարկության գծով ծառայության վճարներ | 9944.5 | 8135.0 | 81.8 |
| 12 | Տեղական վճարներ | 120.0 | 145.0 | 120.8 |
| | Այլ եկամուտներ | 302.9 | 8488.6 | 2802.4 |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ ՍԵՓԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ** | **475592.8** | **482372.0** | 101.4 |
| 13 | ՔԿԱԳ բաժնի պահպանման եկամուտներ | 2227.2 | 2227.2 | 100.0 |
| 14 | Պաշտոնական դրամաշնորհներ | 978528.9 | 978792.9 | 100.0 |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ** | **1456348.9** | **1463392.1** | 100.5 |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ, Ա/Թ** | **1217287.3** | **977796.9** | 80.3 |
| 1 | Հողի և գույքի օտարումից եկամուտներ | 317212.9 | 143730.0 | 45.3 |
| 2 | Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից հատկացում ֆոնդային բյուջե | 346743.9 | 333506.4 | 96.2 |
| 3 | Կապիտալ սուբվենցիա | 538795.4 | 486048.1 | 90.2 |
| 4 | Սուբվենցիայի վերականգնում Ֆ/Բ | 0.0 | 1525.8 | #DIV/0! |
| 5 | Դրամաշնորհ միջազգային կազմակերպութ. | 14535.1 | 14512.4 | 99.8 |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵ** | **2326892.3** | **2107682.6** | 90.6 |

ՀԱՎԵԼՎԱԾ N 3
Սևան համայնքի ավագանու
15.02.2022թ. 2-Ա որոշման

# ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2022Թ. ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԸ

ՀԱԶԱՐ ԴՐԱՄՆԵՐՈՎ

| Հ/Հ | ԾԱԽՍԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ | 2022ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ | | |
|---|---|---|---|---|
| | | ՊԼԱՆ | ՓԱՍՏԱՑԻ | ՊԼԱՆԻ ԿԱՏԱՐՄԱՆ |
| 1 | Ընդհանուր բնույթի համայնքային ծառայություններ | 370935.6 | 368459.1 | 99.3 |
| 2 | Տնտեսական հարաբերություններ | 1000.0 | 0.0 | 0.0 |
| 3 | Շրջակա միջավայրի պաշտպանություն | 211656.0 | 211470.6 | 99.9 |
| 4 | Բնակարան.տնտեսություն | 10399.1 | 10222.0 | 98.3 |
| 3 | Մշակույթի գծով ծախսեր | 55353.0 | 54964.0 | 99.3 |
| 4 | Կրթության գծով ծախսեր | 439030.2 | 437716.0 | 99.7 |
| 5 | Սոցիալական պաշտպանութուն | 22780.0 | 22662.3 | 99.5 |
| 6 | Վ/Բ պահ.ֆոնդից հատկացում Ֆ/Բ | 346743.9 | 333506.4 | 96.2 |
| 7 | Այլ ծախսեր | 0.0 | 0.0 | #DIV/0! |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ** | **1457897.8** | **1439000.4** | **98.7** |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ, ՈՐԻՑ** | **1316355.8** | **1082140.3** | **82.2** |
| 1 | Համայնքի ղեկավարի աշխատակազմի պահպանման ծախսեր | 3668.9 | 2903.4 | 79.1 |
| 2 | Ընդհ. բնույթի համայնքային ծառայություններ | 51939.7 | 21025.0 | 40.5 |
| 3 | Տնտեսական հարաբերություններ /ճանապարհային տնտեսություն/ | 1069594.7 | 915806.9 | 85.6 |
| 4 | Փողոցների լուսավորման ցանցի կառուցում | 140227.3 | 97782.2 | 69.7 |
| 5 | Կրթության գծով ծախսեր | 13746.3 | 7737.7 | 56.3 |
| 6 | Բնակարանային տնտեսություն | 24476.9 | 23699.1 | 96.8 |
| 7 | Մշակույթի գծով ծախսեր | 12702.0 | 12409 | 97.7 |
| | Այլ ծախսեր | 777.0 | 777.0 | 100.0 |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵ** | **2427509.7** | **2187634.3** | **90.1** |

ՀԱՎԵԼՎԱԾ N 4
Հաստատված է համայնքի ավագանու
15.02.2023թ. N1-Ա որոշմամբ

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2022Թ. ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ ԸՍՏ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ

ՀԱԶ. ԴՐ.

| Հ/Հ | ԲՅՈՒՋ. ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ /ԲԱԺԻՆ, ԽՈՒՄԲ, ԴԱՍ/ | ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ | ՓԱՍՏԱՑԻ ԾԱԽՍԵՐԸ ԸՍՏ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ | | | | | ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ | ՈՐԻՑ | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՇԵՆՔ-ՇԻՆ. ԿԱՌՈՒՑՈՒՄ | ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹ. ՀԻՄՆԱՆՈՐՈԳՈՒՄՆԵՐ | ԳՈՒՅՔ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՁԵՌՔ ԲԵՐՈՒՄ | ՆԱԽԱԳԾԱՅ. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ | ՆՅՈՒԹԵՐԻ ՊԱՐԱԳ. ՁԵՌՔ ԲԵՐ | | ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ | ՊԵՏԱԿԱՆ ՍՈՒԲՎԵՆՑԻԱՅԻ ՀԱՇՎԻՆ |
| | | | 5112 | 5113 | 5122 | 5134 | 5221 | | | |
| 1 | **01-1-1** | **ՕՐԵՆՍԴԻՐ, ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ** | | **1500.0** | **130.0** | | **1273.4** | **2903.4** | **2903.4** | **0** |
| | **01-6-1** | Դպրոցի արարողությունների սրահի գույքի ձեռք բերում | | | 13350.0 | | | 13350.0 | 13350.0 | |
| | 01-6-1 | Այլ ծախսեր | | | | 1575.0 | | 1575.0 | 1575.0 | |
| | 01-6-1 | Ծաղկունքի մանկապարտեզի հիմնանորոգում | | 6100.0 | | | | 6100.0 | 6100.0 | |
| 2 | **01-6-1** | **ԸՆԴԱՄԵՆԸ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՄ. ԾԱԽՍԵՐ** | | **6100.0** | **13350.0** | **1575.0** | | **21025.0** | **21025.0** | **0.0** |
| | 04-5-1 | Լճաշենի փողոցների հիմնանորոգման պարտք | | 20969.9 | | 535.0 | | 21504.9 | 952.8 | 20552.1 |
| | 04-5-1 | Գեղամավանի փողոցների հիմնանորոգման պարտք | | 65615.2 | | | | 65615.2 | 32433.7 | 33181.5 |
| | 04-5-1 | Սևանի փողոցների հիմնանորոգման պարտք | | 11330.0 | | 165.7 | | 11495.7 | | 11495.7 |
| | 04-5-1 | Սևանի փողոցների հիմնանորոգում՝ 2022թ. | | 451195.3 | | 2400.0 | | 453595.3 | 230335.3 | 223260.0 |
| | 04-5-1 | Ծովագյուղի փողոցների հիմնանորոգում՝ 2022թ. | | 256679.0 | | 900.0 | | 257579.0 | 129239.5 | 128339.5 |
| | 04-5-1 | Սևանի փողոցների հիմնանորոգում՝ 2022թ. | | 35054.7 | | | | 35054.7 | 35054.7 | |
| | 04-5-1 | Սևանի համայնքի բակային տարածքների հիմնան. 2022թ. | | 40000.0 | | 1012.8 | | 41012.8 | 41012.8 | |
| | 04-5-1 | Պարտքերի մարում | | 25083.5 | | 4865.8 | | 29949.3 | 29949.3 | |
| 3 | **04-5-1** | **ԸՆԴԱՄԵՆԸ ՃԱՆԱՊ. ՏՆՏԵ.** | | **905927.6** | | **9879.3** | | **915806.9** | **498978.1** | **416828.8** |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 4 | **05-1-1** | ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ | **777.0** | | | | | **777.0** | **777.0** | **0** |
| 5 | **06-3-1** | ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ | | **18699.2** | | | | **18699.2** | **18699.2** | **0** |
| | 06-4-1 | Լճաշենի փողոցների լուսավ. ցանցի կառուցման պարտք | | 14339.5 | | | | 14339.5 | 2519.4 | 11820.1 |
| | 06-4-1 | Սևանի և գյուղական բնակ. լուսավորութ. ցանցի կառուցում, հիմնանորոգում՝ 2022թ. | 82250.0 | 428.3 | 0 | 764.4 | | 83442.7 | 33710.4 | 49732.3 |
| 6 | **06-4-1** | ԸՆԴԱՄԵՆԸ ՓՈՂՈՑ. ԼՈՒՍ. | **82250.0** | **14767.8** | **0** | **764.4** | | **97782.2** | **36229.8** | **61552.4** |
| 7 | **06-6-1** | ԸՆԴԱՄԵՆԸ ԲՆԱԿ. ՏՆՏԵՍ՝ | | **5000.0** | | | | **5000.0** | **5000.0** | |
| | 08-1-1 | Լճաշենի սպորտդպրոցի ջեռուցման համակարգի կառուցման պարտք | | 5205.7 | 400.0 | | | 5605.7 | 3007.2 | 2598.5 |
| | 08-1-1 | Լճաշենի պուրակների բարեկարգում | | 6803.3 | | | | 6803.3 | 6599.1 | 204.2 |
| 8 | **08-1-1** | ԸՆԴԱՄԵՆԸ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ | **0.0** | **12009.0** | **400.0** | | | **12409.0** | **9606.3** | **2802.7** |
| | 09-1-1 | Նորաշենի մանկապարտեզի շենքի հիմնանորոգում | | **2844.6** | | | | **2844.6** | **2844.6** | |
| | 09-1-1 | Ծաղկունքի մանկապարտեզի շենքի հիմնանորոգում | | **2615.8** | | | | **2615.8** | | **2615.8** |
| | 09-1-1 | Վարսերի ՄՄ ՀՈԱԿ շենքի հիմնանորոգման պարտք | | **2277.3** | | | | **2277.3** | **28.9** | **2248.4** |
| 9 | **09-1-1** | ԸՆԴԱՄԵՆԸ ՆԱԽԱԴՊՐՈՑ.ԿՐԹՈՒԹՅՈՒ. | | 7737.7 | | | | 7737.7 | **2873.5** | **4864.2** |
| | | ԸՆԴԱՄԵՆԸ | **83027.0** | **971741.3** | **13880.0** | **12218.7** | **1273.4** | **1082140.4** | **596092.3** | **486048.1** |